

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի հունիսի 4-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2016 թվականի ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների և շրջանավարտների դիպլոմների հավելվածների նախապատրաստման ընթացքի մասին:
2. 2016 ուսումնական տարվա շրջանավարտների փաստաթղթերի արխիվացում:
3. 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների նախապատրաստման ընթացքի մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – 2016 թվականի ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների և շրջանավարտների դիպլոմների հավելվածների նախապատրաստման ընթացքի մասին /զեկուցող Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ 2016 թվականի ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքներով Հեռակա ուսուցման ֆակուլտետում շրջանավարտների թիվը 189 է և նրանցից երեք ուսանողների շնորհիվ է գերազանցության դիպլոմ: Ամփոփիչ ատեստավորման առաջադիմությունը կազմում է 89%: Դիպլոմների հավելվածները պատրաստվելու են հունիս ամսվա ընթացքում, և դիպլոմները կշնորհվեն հուլիսի 5-ին:

Արտահայտվեցին – Ա. Ե. Համբարձումյանը, Ա. Ա. Ոսկանյան

Նշվեց, որ 2016 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացներին նախապատրաստվելու նպատակով դասացուցակը և միջանկյալ քննությունների ժամանակացույցը կազմվել է՝ ըստ սահմանված ժամանակացույցի, ինչպես նաև դասընթացների մեկնարկի վերաբերյալ հայտարարությունները տեղադրվել են ԳՊՀ պաշտոնական կայքում:

Նշվեց նաև, կազմվել են արխիվացման ակտեր և 2016 ուսումնական տարվա շրջանավարտների ստուգման գրքույկները և ուսանողական տոմսերը հանձնվել արխիվ:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան

